

ԵՐԿԱՅՆ ՊԵՆԵՐՈՎ ԱԶԻԿԸ

Կոնակնին պատին տված՝ Լորն ու Պեկամուն նստեր էին ու կարևորտեղին միասին, քով-քովի: Ատեն-ատեն Պեկամուն խոշոր աչքերը կվերցնէր, բութ նայվածքով մը կնայէր փողոցին, իսկ Լորը գլուխը ծունկերուն վրա կախէր, արտևանունքն ալ գոցէր էր, կարծես կմրափէր: Միաժամանակ անոնք իրարու հետ ընդհատ-ընդհատ կխոսէին, ցած, անոգևոր ձայնով մը, ինչ-որ բաներու վրա:

Իրենցմէ քիչ անդին երկայն պէխերով երիտասարդ Ազիկը նստեր էր առանձին: Ան թէն կլսէր երկու ծերերուն խոսակցությունը, բայց չէր հետևեր, ոչ իսկ ուշադրություն կդարձնէր անոնց:

Հանկարծ Պեկամուն ձայնը բարձրացուց ու ըսավ Լորին:

– Հէջ չես հարցնէր, թե ի՞նչ պատահեցավ գլխուդ:

– Ի՞նչ պատահեցավ... – պատասխանեց Լորը անտարբերությամբ:

Ու լռեց, շարունակեց մրափել:

– Շաբաթ մը կըլլա, շաբաթ մը եղավ ըսածս... մինչև հիմա մեկուն ալ չէի ըսեր... ալ չպահեմ, ըսեմ, – վերստին հարեց Պեկամուն, որ կուգէր անպատճառ պատմել, չնայած որ Լորը չէր հետաքրքրվեր, ականջ չէր տար իրեն:

Իր տեղէն Ազիկ Լսեց սակայն: Ան իսկույն ցատկեց, ոտքի ելավ, ու եկավ նստավ ծերերու կարգին, ու հարցուց.

– Ի՞նչ է, ի՞նչ է, Պեկամու, քու բաներդ շատ են, եղածը ի՞նչ է, պատմե, մտիկ ընենք:

– Նորեն ո՞վ գիտէ, ի՞նչ շան, գալու պատմություն մը պիտի ըլլա, – նկատեց ծերուկ Լորը, առանց գլուխը վերցնելու ու աչքերը բանալու:

Պեկամուն չփոխադարձեց Լորին դիտողություններուն ու լռեց, բայց դիտմամբ, որպէսզի ավելի սրէ Ազիկի հետաքրքրությունը, ու վերջն ու վերջը, իբր թե՝ տեղի տալով պնդումներուն, ըսավ.

– Հարս մը տեսա, որ հանվեր էր, կլոգնար:

– Զէ, ճանր՛մ... – բացականչեց Ազիկը լայն-լայն երեսներուն վրա զարմանքով մը:

– Ես չըսի՞, – հարեց Լորը աչքերը բանալով, – աս ամեն բան մինակ քեզի կհանդիպի, քեզի հէ՞ջ բարի բան մը չհանդիպիր... Ուր ճահել հարս մը կլոգնա, ուր էքսուկ էթէկ մը գետեն կանցնի, աղբյուրը ծոեր է՝ վարտիքը կերևա, մինակ քեզի ռաստ կուգան:

Իսկ Ազիկ, որ կտենչար իմանալ, գիտնալ, անդադար կխթեր Պեկամուին ծունկին ու կհարցնէր.

– Ըսե՛ , ըսե՛ , Պեկամու, ըսե՛ դուն... աղվո՞ր էր:

Պեկամուն սկսավ պատմել, նկարագրել լոգցող մերկ կնոջ իրանը, զիստերը, մազերը:

– Միսերը թո՞ւլ էին:

– Պինդ, ձիգ... վրան ընկույզ կոտրե:

Ազիկին աչքերը վառեցան ցանկութենէն: Տեղը փոխեց, ու ավելի լավ իմանալու համար՝ առաջը եկավ, ծունկ-ծունկի նստավ ու տեղացուց հարցումները.

– Մինա՛կ էր, մարդ կա՞ր:

– Մինա՛կ... մարդ չկար:

– Ուրտե՞ղ էր, ուրտե՞ղ, Պեկամու:

– Ուռի Ձոր...

– Ուռի Ձոր... ինչպե՞ս ալ տեղն է եղեր, ճիշտ ալ տեղը:

Ու ականջին մոտենալով հարցուց.

– Աղվո՞ր էր:

– Աղվոր էր, աղվո՛ր... ըհը... – պատասխանեց Պեկամուն գլուխը երերցնելով, ու ափերը բանալով և ծանրություն մը կշռելու ձևով շարժելով:

– Չէ՛, ճանը՛մ... էո՛ֆ... – գոչեց դարձյալ Ազիկ այնպիսի շեշտով մը ու դեմքի այնպիսի արտահայտություն ով մը, որ արտակարգ, խելքե, մտքե դուրս բան մը ըլլար կարծես ըսածը, պատմվածը, – ինծի ատանկ բախտ մը ռաստ չգար:

Ու ավելցուց անմիջապէս, մոտենալով ականջին ու ձայնը նորէն ցածցնելով, Լորէն չլսվելու աստիճան:

– Ո՛վ էր, ո՞վ: որո՞ւ կին էր, որո՞ւ ինչ էր՝ կըսես, Պեկամու:

Պեկամուն պատասխանեց, թե չէր կրցած որոշել:

– Է, հիմա ան քեզ չտեսա՞վ կըսես, – հարցուց:

– Չտեսավ:

– Ի՞նչպէս հանդիպեցա՞վ, ի՞նչպէս եղա՞վ, որ ադ կողմերէն անցար, – հետաքրքրվեցա՞վ:

Պեկամու պատմեց:

Վարի հանդն է այդ օրը... Առվույտը քաղեր է, առուն դարձուցեր է արտը, առաջին ջուրն է, որ կուտա հնձված արմատներուն: Նստեր է, ճիկառան կծիւե ու կիսկե... Կքննե... Առուն իր աչքին նվազած կերևի... Աս սովորական ջուրը չէ, կըսե ինքնիրեն, ձորն ի վեր երթամ, անպատճառ առուն կտրած են, ուրիշ կողմ տարած... Բիրը կառնե ու մանր-մանր կառաջանա... Սալը կանցնի, Նեղ Տեղը կանցնի, կքննե, բան՝ չկա... Ուռի Ձոր երթամ, կըսե... Ճերմակ Քարի պզտիկ գառիվերը կելլե, որ պիտի դառնա, ի՞նչ տեսնե... վարը, ձորին մեջ, լվացք են ըրած... փռեր են լաթերը, կշորնան... Երախա մը կա խանձարուրքին մեջ փաթթված, որ կքնանա արևին մեջ, հետո տաշտ մը, ու էշ մը, որ կարծի... Առվին քովը օճախ մը կվառի, վրան ջուր կտաքնա, ու երիտասարդ կին մը... մերկ կայներ է արևին մեջ, ջուր կլեցնե ուսերն ի վար, կլոգնա... Ալ չառաջանար, կմնա հող ու կդիտե...:

– Չէ՛, ճանը՛մ... – գոչեց վերստին Ազիկ, որ հափշտակված մտիկ կընէր, է՛ս, ըլլալու էի հոն, է՛ս... Է, հիմա հավատա՞մ, թե դուն վար չիջար, չգացիր մոտը:

Պեկամուն կհավաստեր, թե չէր գացեր քովը:

Բայց հանկարծ Ազիկ գլուխը կախեց, մտածկոտ երևույթ մը առավ:

- Լվա՞ցք կընեին, ըսիր, երախա մը կա՞ր, էշ մը կա՞ր, ո՞ր օր էր, ո՞ր օր դուն Ուռի Ձոր գացիր:

- Շաբաթ, հա, շաբաթ օրն էր, - պատասխանեց Պեկամուն, - ի՞նչ կա, ինչո՞ւ հարցուցիր:

- Հէ՛չ, հարցուցի, Բան մը չկա, - ըսավ Ազիկ չոր շեշտով մը, ու ոտքի ելավ:

Ըսավ, թե պարտեզին պատը փլած էր, որմելու պիտի երթար, ու հեռացավ:

Շիտակ տուն գնաց:

Իրենց նեղ ու փոքր փողոցը, արևին մեջ ելեր էին թաղին կիները: Ոտքի վրա կայնած գուլպա կիյուսեին, բուրդ կմանեին անոնք, ու ոգևորված, աղմկալի խոսակցության մը տված էին իրենք զիրենք, կինն ալ անոնց մեջ էր, բուրդ կմաներ:

Ազիկ կիսաբաց դռնեն տուն մտավ թե չէ, անմիջապես իր կինը ներս կանչեց: Բոլուկը ջուր մնացած չըլլալուն համար՝ նեղացավ նախ, հետո իսկույն փոխելով շեշտը, մեղմությամբ հարցուց.

- Ինձի նայե, դուն ե՞րբ էր, որ լվացք ընել գացիր:

- Շաբաթ օր, - պատասխանեց կինը բուրդմանիկը ձեռքը ու արևին մեջ կայնելեն դեմքը շառագույն ու թարթիչները ոսկեգույն փայլելով:

- Լվացքը ո՞ւր ըրիր, ո՞ւր գացեր էիր ըսիր:

- Ուռի Ձոր, ի՞նչ կա:

- Բան մը չկա, հարցուցի ատանկ:

Կինը պատմեց, թե Շիրազ քույրն ու քրոջը աղջիկն ալ միասին էին, լվացքին օգներ էին իրեն, հետո թողեր էին զինքը, Բահելու գացեր էին իրենց պարտեզը, մինակ էր մնացեր, լվացք ավարտեր էր, տաք ջուր ալ կար, ինքն ալ հանվեր, լոզցեր էր, հետո հազվեր, չորցած լաթերը հավաքեր, բեռցեր իշուն ու տուն դարձեր էր՝ երախան շալկած: Ու վերստին հարցուց, թե ի՞նչ կա, ինչո՞ւ համար կհարցներ:

- Աղեկ, աղեկ... - պատասխանեց հանդարտորեն Ազիկ, - Բան մը չկա, հարցուցի անանկ մինակ, - ու ընդհատեց խոսակցությունը:

Հովիտը ուղղվեցավ: Գյուղին պարտեզները թավ խոտերով գոցված էին, ծառերեն շատերը տերևներով համակ քողքվեր, խնձորենիները ծաղկեր էին: Մեղուներու երաժշտություն մը կլսվեր, հովիտին արտերը կխայտային, օդը տաք էր, շատ տաք ու բուրումնավետ: Ու կյանքը կհևար, կժայթքեր դուրս բոլոր անկյուններեն, միջոցին մեջ, բլուրներու հեռավորության վրա լուսեղեն գիծեր կնետվեին ու կվառեին:

Ազիկ նստավ կանանչության մեջ ու նայեցավ շուրջը: Հիմա ամեն բան հասկցած էր այլևս: Պեկամուն իր կինը, անոր մերկությունը տեսեր էր: Ադ պատմեր էր իրեն: Ա՛յ սատկելիք ծեր:

Իրիկունը տուն դարձավ, քաշվեցավ անկյունը, ու ամեն անգամ, որ կինը կանգներ կդառնար առաջքեն՝ Ազիկ կնայեր աչքին ներքևովը հասակին, արագ շարժումներուն, ու այդ մարմինը ուրիշե մը, շնճերե մը տեսնված ըլլալը հիշելով, կմթագներ, կսրտմտեր, կհայհոյեր մտովի Պեկամուին ալ, իրեն ալ: